ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	թիվ 261-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2008.10.22/36(310) Հոդ.310	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Կենտրոնական բանկի խորհուրդ	*Ընդունման ամսաթիվը*	26.08.2008
Ստորագրող մարմինը	Կենտրոնական բանկի նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	03.09.2008
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30.04.2009	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՄԱՆ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
6 հոկտեմբերի 2008 թ.
Պետական գրանցման թիվ 05008294

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

26 օգոստոսի 2008 թ. թիվ 261-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՄԱՆ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը խմբ. 07.04.09 թիվ 80-Ն)

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը և «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ***որոշում է.***

1. Հաստատել «Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման և տվյալների պահպանման վերաբերյալ կարգը»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի ապրիլի 30-ից:

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ

Ա. Ջավադյան

2008 թ. սեպտեմբերի 3
Երևան

Հավելված 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի օգոստոսի 26-ի
թիվ 261-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՄԱՆ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(վերնագիրը խմբ. 07.04.09 թիվ 80-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) ամրագրված՝ բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման, երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրման կարգն ու պայմանները:

(1.1-ին կետը փոփ. 07.04.09 թիվ 80-Ն)

1.2. Սույն կարգում օգտագործվող սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանումներին:

1.3 Սույն կարգի իմաստով խնդրահարույց պարտավորություն է համարվում հաշվետու ամսվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ ավանդատուի՝ բանկի նկատմամբ ունեցած այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացել է պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

(1.3-րդ կետը լրաց. 04.03.16 թիվ 35-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 2

ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՒ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄԸ, ՎԱՐՈՒՄԸ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

(վերնագիրը խմբ. 07.04.09 թիվ 80-Ն)

2.1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված նրանց մասնաճյուղերի), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը (այսուհետ՝ բանկ) ձևավորում են ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն կտա ստեղծել ֆիզիկական անձ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր ավանդատուների (այսուհետ՝ ավանդատու) վերաբերյալ տվյալների բազա:

2.2. Ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգը ծրագրային ապահովվածություն ունեցող տեղեկատվական համակարգ է, որը հնարավորություն է տալիս իրականացնել ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում, առկա տեղեկատվության փոփոխում և ցանկացած պահի դրությամբ ավանդների ու ավանդատուների վերաբերյալ տեղեկատվության արտահանում:

2.3. Բանկերն ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգը վարում և տվյալները պահպանում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության

ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգին (այսուհետ՝ Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջներ) համապատասխան:

(2.3-րդ կետը խմբ. 15.12.15 թիվ 265-Ն)

2.4. Ի լրումն «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների՝ բանկը պարտավոր է.

ա) ավանդների և ավանդատուների վերաբերյալ ծածկագրված տվյալների բազան պահպանել երկու տարբեր համակարգիչներում, ընդ որում, դրանցից մեկը պետք է լինի ռեզերվային սերվեր,

բ) յուրաքանչյուր աշխատանքային օր իրականացնել ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազայի պահուստային կրկնօրինակում և յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ ավանդների և ավանդատուների վերաբերյալ ամբողջական տվյալների բազայի ծածկագրված կրկնօրինակը պահպանել արտաքին կրիչների վրա և ապահովել վերջիններիս պաշտպանվածությունը հրդեհներից ու այլ աղետներից, ինչպես նաև անձեռնմխելիությունը չարտոնված առնչություններից,

գ) սահմանել ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազային մուտք ունենալու իրավասություններ ունեցող համապատասխան աշխատակիցների ցանկը՝ հաստատված գործադիր մարմնի կողմից, ինչպես նաև այդ իրավասությունների բովանդակությունը,

դ) ապահովել սույն կետի ա) - գ) ենթակետերում նշված բոլոր գործողությունների համապատասխան փաստաթղթավորումը:

(2.4-րդ կետը փոփ. 15.12.15 թիվ 265-Ն)

2.5. Ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազայում բանկը արտացոլում է բանկի գլխամասի և բոլոր մասնաճյուղերի ավանդատուների վերաբերյալ միասնական տեղեկատվություն: Բանկը պատասխանատու է ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազայում ներառված տեղեկությունների ճշտության համար:

2.6. Ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազան ձևավորելու նպատակով բանկը ավանդատուի համար բանկային հաշվի բացման, ավանդային պայմանագրի կնքման կամ ավանդատուի հանդեպ այլ պարտավորությունների ծագման ժամանակ ստանում է ավանդատուի և ավանդատուի անձը հաստատող փաստաթղթի տեսակի և ռեկվիզիտների վերաբերյալ սույն կարգի աղյուսակ 1-ով սահմանված տեղեկատվությունը: Իսկ գործող ավանդների համար բանկը հնարավորության դեպքում թարմացնում է սույն կարգի աղյուսակ 1-ով պահանջվող տեղեկատվությունը:

2.6.1. Բանկերը յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ բանկի ավանդների և ավանդատուների վերաբերյալ ամբողջական տվյալների բազան Կենտրոնական բանկ են ներկայացնում մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա հինգերորդ աշխատանքային օրը: Ավանդների և ավանդատուների վերաբերյալ ամբողջական տվյալների բազան Կենտրոնական բանկ ներկայացնելու առաջին հաշվետու ամիս է համարվում 2009 թվականի մայիս ամիսը:

(2.6.1-ին կետը լրաց. 07.04.09 թիվ 80-Ն)

2.7. Բանկը պարտավոր է Կենտրոնական բանկի առաջին իսկ պահանջով մինչև պահանջը ստանալու հաջորդ աշխատանքային օրվա ժամը 18^{00} -ն ներկայացնել ավանդների և ավանդատուների վերաբերյալ ամբողջական տվյալների բազան՝ պահանջը ստանալու նախորդ աշխատանքային օրվա վերջի դրությամբ:

2.8. Ավանդների և ավանդատուների վերաբերյալ ծածկագրված տվյալների բազան Կենտրոնական բանկ է ներկայացվում արտաքին կրիչներով՝ ուղեկցող նամակով և «Բանկային գաղտնիք» մակագրությամբ՝ ապահովելով տեղեկատվության գաղտնիությունը, անվտանգությունը և հուսալիությունը: Սույն կետով նախատեսված կրիչները Կենտրոնական բանկ են ներկայացվում զմռսված և կնքված փաթեթով: Ներկայացված փաթեթների վրա կատարվում է նշագրում՝ նշելով ներկայացրած բանկի անվանումը և այն ամիսը/տարեթիվը, որին վերաբերող տվյալներն արտացոլված են փաթեթում ընդգրկված կրիչներում: Փաթեթի վրա պետք է առկա լինի ներկայացնող բանկի կնիքը: Նշված փաթեթը Կենտրոնական բանկում կարող է բացվել միայն Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ:

(2.8-րդ կետը խմբ. 07.04.09 թիվ 80-Ն)

2.9. Տվյալները Կենտրոնական բանկ են ներկայացվում XML ֆորմատով: Այլ կերպ ներկայացված տեղեկատվությունը համարվում է չընդունված: XML ֆայլերը արխիվացվում են «rar» արխիվատորով: Մինչև 2009 թվականի մայիսի 15-ը բանկերը Կենտրոնական բանկ են ներկայացնում XML ֆայլերի ապածածկագրման բանալիները՝ զմռսված և կնքված փաթեթով՝ ապահովելով տեղեկատվության գաղտնիությունը, անվտանգությունը և հուսալիությունը: Կենտրոնական բանկը պարբերաբար բանկերից կարող է պահանջել ներկայացնել սույն կետում նշված ապածածկագրման բանալիների թարմացված տարբերակները: XML ֆայլերի ծածկագրման միջոց է «Արաքս-ԿԲ» համալիրը: XML-ի սխեմաները բանկերին տրամադրվում են Կենտրոնական բանկի կողմից:

(2.9-րդ կետը լրաց. 07.04.09 թիվ 80-Ն)

2.10. Կենտրոնական բանկ ներկայացված և բանկում պահվող ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների համապատասխանության ստուգման նպատակով Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության աշխատակիցները բանկերում վերստուգումների իրականացման ժամանակ բանկի իրավասու աշխատակիցների ներկայությամբ կարող են բացել սույն Կարգի 2.8 կետով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացված զմռսված և կնքված փաթեթները և դրանցում պարունակվող տեղեկատվությունը համեմատել բանկում ձևավորված տվյալների բազայում ներառված տեղեկատվության հետ: Ստուգման արդյունքում տվյալների համապատասխանության դեպքում տվյալ բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված բոլոր փաթեթները, բացի

վերջին ներկայացվածից կարող են վերադարձվել բանկին:

(2.10-րդ կետը լրաց. 07.04.09 թիվ 80-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 3

ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Բանկերի կողմից ստեղծվող և վարվող ավանդների ու ավանդատուների վերաբերյալ տվյալների բազան ներառում է սույն կարգի աղյուսակ 1-ով սահմանված տեղեկությունները:

Աղյուսակ 1

1. Հաշվետու բանկ

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Բանկի կոդը	Լրացվում է բանկի հնգանիշ կոդը	պարտադիր
Ամսաթիվ	Լրացվում է հաշվետու օրվա ամսաթիվը (օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999))	պարտադիր

2. Ավանդատուի տվյալներ

2.1. Ավանդատու[1]

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Ավանդատուի նույնացուցիչ	Լրացվում է ավանդատուի ունիկալ նույնացուցիչը (որը կարող է լինել նաև ավանդատուի հերթական համարը ավանդատուների ցուցակում)	պարտադիր
Ազգանուն	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
Անուն	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
Հայրանուն	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	օժանդակ[2]
Ծննդյան ամսաթիվ	Լրացվում է ավանդատուի ծննդյան օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999)	օժանդակ
Սեռ	Լրացվում է ավանդատուի սեռը	պարտադիր
Քաղաքացիություն	Լրացվում է ավանդատուի քաղաքացիությունը (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, փախստական, քաղաքացիություն չունեցող անձ, օտարերկրյա քաղաքացի)	օժանդակ

ՀՎՀՀ	Լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող ավանդատուների հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց համար չի լրացվում	օժանդակ
Սոցիալական ապահովության քարտ	Լրացվում է ավանդատուի սոցիալական ապահովության քարտի համարը, որը ենթակա է պարտադիր լրացման նոր բացվող բոլոր բանկային հաշիվների համար	օժանդակ

2.2. Անձը հաստատող փաստաթուղթ

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Տեսակը	Լրացվում է ավանդատուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, որը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթերի ցանկում[3]: Եթե ավանդատուն բանկում ունի մի քանի ավանդ, որոնք ներդրվել են տարբեր անձը հաստատող փաստաթղթերով, ապա բանկը հաճախորդին նույնականացնելու դեպքում պետք է լրացնի բանկ ներկայացված ավանդատուի բոլոր անձը հաստատող փաստաթղթերի՝ սույն աղյուսակով պահանջվող ռեկվիզիտները:	օժանդակ
Համարը	Լրացվում է ավանդատուի անձը հաստատող համապատասխան փաստաթղթի համարը (սերիան), բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքի իրականացման ժամանակ հաճախորդի անձը հաստատող փաստաթուղթը չի պահանջվում	պարտադիր
Տրման ամսաթիվը	Լրացվում է ավանդատուի անձը հաստատող համապատասխան փաստաթղթի տրման ամսաթիվը (օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999))	օժանդակ
Ում կողմից	Լրացվում է ավանդատուի անձը հաստատող համապատասխան փաստաթուղթը տվող մարմնի կոդը կամ անվանումը	օժանդակ
Վավերականության ժամկետ	Լրացվում է ավանդատուի անձը հաստատող համապատասխան փաստաթղթի վավերականության ժամկետը (օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999))	օժանդակ

2.3. Հաշվառման հասցե

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Երկիր	Լրացվում է ավանդատուի հաշվառման (գրանցման) երկրի լատինատառ կոդը[3]	օժանդակ
Բնակավայր	Լրացվում է ավանդատուի հաշվառման (գրանցման) բնակավայրի կոդը[3] (եթե հաշվառման վայրը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս է, չի լրացվում)	օժանդակ

Հասցե	Լրացվում է ավանդատուի հաշվառման (գրանցման) հասցեն (մասնավորապես փողոց/թաղամաս, շենք/տուն, բնակարան)	օժանդակ

2.4. Հետադարձ կապի հասցե, հեռախոսահամար

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Երկիր	Լրացվում է ավանդատուի բնակության վայրի երկրի լատինատառ կոդը[3]	օժանդակ
Բնակավայր	Լրացվում է ավանդատուի բնակության վայրի բնակավայրի կոդը[3] (եթե բնակության վայրը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս է, չի լրացվում)	օժանդակ
Հասցե	Լրացվում է ավանդատուի բնակության հասցեն (փողոց/թաղամաս, շենք/տուն, բնակարան)	օժանդակ
Հեռախոս	Լրացվում է (են) ավանդատուի հեռախոսահամարը (ները)	օժանդակ
e-mail	Լրացվում է (են) ավանդատուի էլեկտրոնային փոստի հասցեն (ները)	օժանդակ

3. Բանկի նկատմամբ ավանդատուի պահանջներ [4]

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Բանկի մասնաճյուղի կոդը	Լրացվում է բանկի այն մասնաճյուղի հնգանիշ կոդը, որի նկատմամբ ձևավորվել է ավանդատուի՝ Օրենքի իմաստով ավանդ համարվող պահանջը (այսուհետ՝ պահանջ)	պարտադիր
Փաստաթղթի համար	Լրացվում է բանկի նկատմամբ ավանդատուի յուրաքանչյուր պահանջը հավաստող փաստաթղթի համարը	օժանդակ
Փաստաթղթի ամսաթիվ	Լրացվում է բանկի նկատմամբ ավանդատուի յուրաքանչյուր պահանջը հավաստող փաստաթղթի (պահանջի ծագման) ամսաթիվը (օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999))	օժանդակ
Հաշվեհամար	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի համար բանկի կողմից տրված հաշվեհամարը	պարտադիր
Տեսակ	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի անվանումը (ցպահանջ կամ ժամկետային ավանդ, ընթացիկ, հաշվարկային, խնայողական հաշիվ, անվանական պարտատոմս և այլ պահանջներ, որոնք համապատասխանում են Օրենքում տրված բանկային ավանդի սահմանմանը)[3]	պարտադիր

Ավանդի կարգավիճակը	Եթե ավանդը երաշխավորված է, ապա լրացվում է՝ «ER», եթե երաշխավորված չէ, ապա լրացվում է՝ «NER»	պարտադիր
Չերաշխավորված ավանդի պատճառը	Եթե ավանդը երաշխավորված է, ապա չի լրացվում, եթե երաշխավորված չէ, ապա լրացվում է պատճառը (ըստ Օրենքի հոդված 2-ի, 3-րդ մասի սահմանման)	օժանդակ
Արժույթ	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի արժույթի ISO կոդը[3]	պարտադիր
Ավանդատուի մասնաբաժինը	Լրացվում է համատեղ ավանդների դեպքում՝ արտահայտելով տվյալ ավանդատուի մասնաբաժինը (տոկոսային արտահայտությամբ) ավանդի ընդհանուր գումարում	օժանդակ
Սկզբնական գումար	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի սկզբնական (մայր) գումարը՝ առանց դրա վրա հավելագրված տոկոսների (ավանդի մայր գումար, պարտատոմսի գնման գին և այլն): Համատեղ ավանդի դեպքում լրացվում է ավանդի ընդհանուր գումարը, այլ ոչ թե տվյալ ավանդատուի մասնաբաժինը	պարտադիր
Տոկոսադրույք	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի նկատմամբ կիրառվող տարեկան տոկոսադրույքը	պարտադիր
Տոկոսագումար	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի նկատմամբ հաշվետու օրվա դրությամբ հավելագրված և չվճարված տոկոսագումարը	պարտադիր
Մնացորդ	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի մնացորդը հաշվետու օրվա դրությամբ	պարտադիր
Միացման ամսաթիվ	Լրացվում է բանկին՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում միացման պայմանագիրը օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու և գրանցվելու ամսաթիվը	օժանդակ
Միացող բանկի կոդը	Լրացվում է միացող բանկի հնգանիշ կոդը	օժանդակ
Մարման ամսաթիվ	Լրացվում է բանկերի միացման արդյունքում ձևավորված ժամկետային բանկային ավանդի պայմանագրի ժամկետի ավարտի ամսաթիվը	օժանդակ

4. Բանկի նկատմամբ ավանդատուի խնդրահարույց պարտավորություններ [5]

Դաշտի անվանումը	**Նկարագրությունը**	**Բնութագիրը**
Բանկի մասնաճյուղի կոդը	Լրացվում է բանկի այն մասնաճյուղի հնգանիշ կոդը, որի նկատմամբ ձևավորվել է ավանդատուի խնդրահարույց պարտավորությունը	օժանդակ

Փաստաթղթի համար	Լրացվում է բանկի նկատմամբ ավանդատուի յուրաքանչյուր խնդրահարույց պարտավորությունը հավաստող փաստաթղթի համարը	օժանդակ
Փաստաթղթի ամսաթիվ	Լրացվում է բանկի նկատմամբ ավանդատուի յուրաքանչյուր խնդրահարույց պարտավորությունը հավաստող փաստաթղթի ամսաթիվը (օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999))	օժանդակ
Հաշվեհամար	Լրացվում է բանկի հանդեպ ավանդատուի յուրաքանչյուր խնդրահարույց պարտավորության համար բանկի կողմից տրված հաշվեհամարը	օժանդակ
Տեսակ	Լրացվում է բանկի հանդեպ ավանդատուի յուրաքանչյուր խնդրահարույց պարտավորության անվանումը (վարկ, բանկային հաշվի վարկավորում, այլ փոխառություններ, ֆակտորինգային, լիզինգային գործառնություններ, բանկի նկատմամբ ցանկացած հիմքով ծագած այլ խնդրահարույց պարտավորություններ)[3]	օժանդակ
Արժույթ	Լրացվում է բանկի հանդեպ ավանդատուի յուրաքանչյուր խնդրահարույց պարտավորության արժույթի ISO կոդը3	օժանդակ
Սկզբնական գումար	Լրացվում է բանկի հանդեպ ավանդատուի յուրաքանչյուր խնդրահարույց պարտավորության մայր գումարը՝ առանց դրա վրա հավելագրված տոկոսների	օժանդակ
Տոկոսադրույք	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր խնդրահարույց պարտավորության նկատմամբ կիրառվող տարեկան տոկոսադրույքը	օժանդակ
Տոկոսագումար	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր խնդրահարույց պարտավորության նկատմամբ հաշվետու օրվա դրությամբ հավելագրված և չվճարված տոկոսագումարը	օժանդակ
Տույժ և տուգանք	Լրացվում է բանկի հանդեպ ավանդատուի յուրաքանչյուր խնդրահարույց պարտավորության նկատմամբ հաշվարկված տույժերի և տուգանքների մեծությունների հանրագումարը դրամական արտահայտությամբ	օժանդակ
Մնացորդ	Լրացվում է բանկի նկատմամբ ավանդատուի յուրաքանչյուր խնդրահարույց պարտավորության մնացորդը հաշվետու օրվա դրությամբ	օժանդակ

5. Երաշխավորված ավանդ

Ավանդատուին հատուցման ենթակա գումարի չափը, այդ թվում՝	Լրացվում է տվյալ ավանդատուի երաշխավորված ավանդի չափը ՀՀ դրամով՝ հաշվարկված ըստ սույն կարգի հավելված 2-ի: Չի լրացվում այն ավանդների համար, որոնք երաշխավորված ավանդ չեն համարվում	օժանդակ
Տոկոսագումար	Լրացվում է հատուցման ենթակա գումարի և Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված ավանդների գումարի դրական տարբերությունը: Բացասական տարբերության դեպքում չի լրացվում:	օժանդակ

6. Ամփոփ

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Ավանդատուների քանակ	Լրացվում է բանկի ավանդատուների ընդհանուր թիվը	պարտադիր
Ավանդների քանակ	Լրացվում է բանկի կողմից ներգրավված ավանդների ընդհանուր թիվը	պարտադիր
Ավանդների ընդհանուր գումարը, այդ թվում՝	Լրացվում է բանկի կողմից ներգրավված դրամային ավանդների և արտարժութային ավանդների հանրագումարը՝ դրամային արտահայտությամբ	պարտադիր
դրամային ավանդներ	Լրացվում է բանկի կողմից ներգրավված դրամային ավանդների հանրագումարը	պարտադիր
արտարժութային ավանդներ	Լրացվում է բանկի կողմից ներգրավված արտարժութային ավանդների հանրագումարը՝ դրամային արտահայտությամբ	պարտադիր
Երաշխավորված ավանդների չափը	Լրացվում է բանկի բոլոր երաշխավորված ավանդների ընդհանուր գումարը	պարտադիր

[1] Հօգուտ երրորդ անձի ներդրված ավանդների դեպքում նշվում են ավանդը ներդնողի տվյալները՝ մինչև երրորդ անձի՝ ավանդը տնօրինելու իրավունքն ուժի մեջ մտնելու պահը, այնուհետև, որպես ավանդատու հանդես է գալիս երրորդ անձը, և ավանդատուի վերաբերյալ տեղեկատվության մեջ նշվում են վերջինիս տվյալները:

[2] Աղյուսակ 1-ում օժանդակ լրացման համար նախատեսված դաշտերը ենթակա են պարտադիր լրացման համապատասխան տվյալները բանկին հասանելի լինելու դեպքում:

[3] Բանկերը աղյուսակ 1-ում ներառված արժույթների ISO կոդերը, երկրների կոդերը, Հայաստանի Հանրապետության բնակավայրերի կոդերը և անձը հաստատող փաստաթղթի տեսակները, բանկի նկատմամբ ավանդատուի պահանջները և խնդրահարույց պարտավորությունները լրացնում են ըստ սույն կարգի Հավելված 1-ով ներկայացված տեղեկագրերի:

[4] Եթե միևնույն ավանդատուն տվյալ բանկի նկատմամբ ունի մեկից ավելի պահանջներ, ապա աղյուսակ 1-ի 3-րդ մասով պահանջվող տեղեկատվությունը լրացվում է յուրաքանչյուր պահանջի համար:

[5] Եթե միևնույն ավանդատուն տվյալ բանկի նկատմամբ ունի մեկից ավելի խնդրահարույց պարտավորություններ, ապա աղյուսակ 1-ի 4-րդ մասով պահանջվող տեղեկատվությունը լրացվում է յուրաքանչյուր խնդրահարույց պարտավորության համար:

(3.1-ին կետը խմբ., փոփ. 07.04.09 թիվ 80-Ն, փոփ., լրաց. 04.03.16 թիվ 35-Ն)

3.2. Եթե ավանդային պայմանագրով նախատեսված է, որ տվյալ ավանդը բացի ավանդատուից տնօրինելու իրավունք ունի (ունեն) նաև այլ անձ (անձինք), ապա նրա (նրանց) համար ևս լրացվում են սույն կարգի աղյուսակ 1-ի 2-րդ մասով պահանջվող տվյալները:

ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳԻ

Հավելված 1

ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏԵՍԱԿԸ

Փաստաթղթի կոդը	Անձը հաստատող փաստաթղթի անվանումը

AND	Անձնագիր
ZIG	Զինվորական գրքույկ
NGN	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության մարմինների կողմից ժամանակավորապես տրվող անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ
CVK	Ծննդյան վկայական (մինչև 16 տարեկան անձանց համար)
PVK	Փախստականի վկայական
PCP	Փախստականի ճամփորդական փաստաթուղթ
OTA	Օտարերկրյա պետության անձնագիր
AHP	Անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթուղթ
HHA	Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր
KVK	Կացության վկայական

ԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ISO ԿՈԴԵՐԸ

ISO-ի կոդը	ԱՐՏԱՐԺՈՒՅԹ
AMD	Հայկական դրամ
USD	ԱՄՆ դոլար
EUR	ԵՎՐՈ
RUB	Ռուսաստանյան ռուբլի
GBP	Անգլիական ֆունտ ստեռլինգ
AUD	Ավստրալիական դոլար
ARP	Արգենտինական պեսո
DKK	Դանիական կրոն
EGP	Եգիպտական ֆունտ

TLY	Թուրքական լիրա
IRR	Իրանական ռիալ
ILS	Իսրայելական շեքել
PLZ	Լեհական զլոտի
LBP	Լիբանանյան ֆունտ
CAD	Կանադական դոլար
INR	Հնդկական ռուփի
HUF	Հունգարական ֆորինտ
JPY	Ճապոնական իեն
NOK	Նորվեգական կրոն
SEK	Շվեդական կրոն
CHF	Շվեյցարական ֆրանկ
CZK	Չեխական կրոնա
CNY	Չինական յուան
SGD	Սինգապուրյան դոլար
SKK	Սլովակյան կրոնա
KRW	Հարավկորեական վոն
BRC	Բրազիլական ռեալ
MXN	Մեքսիկական պեսո
SAR	Սաուդ. Արաբական ռիալ
SYP	Սիրիական ֆունտ
AED	ՄԱԷ դիրհամ

KWD	Քուվեյթյան դինար
BGL	Բուլղարական լեվ
RON	Ռումինական լեյ
ISK	Իսլանդական կրոն
EEK	Էստոնական կրոն
LVL	Լատվիական լատ
LTL	Լիտվական լիտ
KGS	Ղրղըզական սոմ
KZT	Ղազախական տենգե
MDL	Մոլդովական լեյ
UAH	Ուկրաինական գրիվնյա
UZS	Ուզբեկական սում
BYR	Բելառուսական ռուբլի
TJS	Տաջիկական սոմոնի
TMM	Թուրքմենական մանաթ
GEL	Վրացական լարի
HKD	Հոնգկոնգի դոլար
OTH	Այլ

ՊԱՀԱՆՋԻ ՏԵՍԱԿԸ

Կոդը	**Պահանջը**
JDE	Ժամկետային ավանդ

CPA	Ցպահանջ ավանդ
ANA	Անչափահասի անունով ներդրված ավանդ
HAH	Հաշվարկային հաշիվ
YHA	Ընթացիկ հաշիվ
JHA	Ժամկետային հաշիվ
XHA	Խնայողական հաշիվ
THA	Տարանցիկ հաշիվ
AHA	Այլ հաշիվ
AVC	Ավանդային սերտիֆիկատներ
ATA	Առանց տոկոսի անվանական արժեթղթեր
TAA	Տոկոսային անվանական արժեթղթեր
AAA	Այլ անվանական (ոչ բաժնեմասային) արժեթղթեր
DPP	Դրամական փոխանցումների դիմաց պարտավորություններ
CMP	Ժամկետը լրացած, բայց չմարված ներգրավված միջոցների դիմաց պարտավորություններ
PXR	Փոխառություններ
KRP	Կրեդիտորական պարտք
APA	Ավանդատուի հանդեպ այլ պարտավորություններ

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

Կոդը	**Խնդրահարույց պարտավորությունը**
SPV	Սպառողական վարկ
BIV	Բիզնես վարկ

AVV	Ավտոմեքենայի վարկ
HPV	Հիպոթեքային վարկ
LBV	Լոմբարդային (ոսկու գրավադրմամբ) վարկ
USV	Ուսման վարկ
AVK	Այլ վարկ
PXT	Փոխառություն
DEP	Դեբիտորական պարտք
LIZ	Լիզինգ
FAC	Ֆակտորինգ
APA	Ավանդատուի նկատմամբ այլ պահանջներ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Պետության կոդը	**Պետության անվանումը**
NVL	Տվյալը բացակայում է
ALB	Ալբանիա
DZA	Ալժիր
USA	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
AGO	Անգոլա
AUS	Ավստրալիա
AUT	Ավստրիա
ARE	Արաբական Միացյալ Էմիրություններ
ARG	Արգենտինա

AFG	Աֆղանստան
BRA	Բրազիլիա
BLR	Բելառուս
BEL	Բելգիայի Թագավորություն
BRG	Բուլղարիա
BIH	Բոսնիա և Հերցեգովինա
GHA	Գանա
DEU	Գերմանիա
DNK	Դանիա
EGY	Եգիպտոս
ZMB	Զամբիա
EST	Էստոնիա
THA	Թաիլանդ
TKM	Թուրքմենստան
TUR	Թուրքիա
IDN	Ինդոնեզիա
IRL	Իռլանդիա
ISL	Իսլանդիա
ESP	Իսպանիա
ISR	Իսրայել
ITA	Իտալիա

IRN	Իրան
IRQ	Իրաք
LVA	Լատվիա
POL	Լեհաստան
LBR	Լիբիա
LBN	Լիբանան
LTU	Լիտվա
HRV	Խորվաթիա
KHM	Կամբոջա
CAN	Կանադա
QAT	Կատար
CYP	Կիպրոս
PRK	Կորեայի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետություն
KOR	Կորեայի Հանրապետություն
CUB	Կուբա
ARM	Հայաստանի Հանրապետություն
IND	Հնդկաստան
JOR	Հորդանան
HUN	Հունգարիա
GRC	Հունաստան
KAZ	Ղազախստան

KGZ	Ղրղզստան
JPN	Ճապոնիա
MYS	Մալայզիա
MAR	Մարոկո
MEX	Մեքսիկա
MDA	Մոլդովա
NPL	Նեպալ
NGA	Նիգերիա
NLD	Նիդերլանդներ
NOR	Նորվեգիա
SWE	Շվեդիա
CHE	Շվեյցարիա
LKA	Շրի Լանկա
CZE	Չեխիա
CHN	Չինաստան
ROU	Ռումինիա
RUS	Ռուսաստան
PRT	Պորտուգալիա
SRB	Սերբիա
SYR	Սիրիա
SVK	Սլովակիա

SVN	Սլովենիա
SGP	Սինգապուր
VEN	Վենեսուելա
GEO	Վրաստան
UKR	Ուկրաինա
UZB	Ուզբեկստան
URY	Ուրուգվայ
KWT	Քուվեյթ
PHL	Ֆիլիպիններ
FIN	Ֆինլանդիա
FRA	Ֆրանսիա
NKR	ԼՂՀ
OTH	Այլ

ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	**Բնակավայրի անվանումը**
NOVL	Տվյալը բացակայում է

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	**Բնակավայրի անվանումը**
AG01	Աշտարակ
AG02	Ապարան
AG03	Թալին

AG04	Ագարակ (Աշտարակի շրջ.)
AG05	Ագարակավան
AG06	Ալագյազ
AG07	Ակունք
AG08	Աղձք
AG09	Սադունց
AG10	Անտառուտ
AG11	Աշնակ
AG12	Ավան
AG13	Մեծաձոր
AG14	Ավշեն
AG15	Արագած (Ապարանի շրջ.)
AG16	Արագածավան
AG17	Արագածոտն
AG18	Արա
AG19	Թաթուլ
AG20	Արտաշատավան
AG21	Արտենի
AG22	Արուճ
AG23	Ափնագյուղ
AG24	Բազմաղբյուր

AG25	Օթևան
AG26	Արևուտ
AG27	Բերքառատ
AG28	Բյուրական
AG29	Գառնահովիտ
AG30	Գեղադիր
AG31	Գեղաձոր
AG32	Գեղարոտ
AG33	Գետափ
AG34	Կանչ
AG35	Դաշտադեմ
AG36	Դավթաշեն
AG37	Ճարճակիս
AG38	Դիան
AG39	Դպրևանք
AG40	Եղիպատրուշ
AG41	Եղնիկ
AG42	Երնջատափ
AG43	Զարինջա
AG44	Զովասար
AG45	Թթուջուր

AG46	Թլիկ
AG47	Իրինդ
AG48	Լեռնապար
AG49	Լեռնարոտ
AG50	Լուսագյուղ
AG51	Լուսակն
AG52	Ծաղկահովիտ
AG53	Ծաղկաշեն
AG54	Ծաղկասար
AG55	Ծիլքար
AG56	Կաթնաղբյուր
AG57	Կարբի
AG58	Կարմրաշեն
AG59	Կաքավաձոր
AG60	Կոշ
AG61	Հակկո
AG62	Հարթավան
AG63	Հացաշեն
AG64	Հնաբերդ
AG65	Զորագլուխ
AG66	Դդմասար

AG67	Ղազարավան
AG68	Մաստարա
AG69	Մելիքգյուղ
AG70	Միջնատուն
AG71	Միրաք
AG72	Կայք
AG73	Ներքին Բազմաբերդ
AG74	Ներքին Սասունաշեն
AG75	Նիգավան
AG76	Նոր Ամանոս
AG77	Շողակն
AG78	Նորաշեն (Արագածի շրջ.)
AG79	Նոր Արթիկ
AG80	Նոր Եդեսիա
AG81	Շամիրամ
AG82	Շենավան
AG83	Շենկանի
AG84	Շղարշիկ
AG85	Ոսկեթաս
AG86	Ոսկեհատ
AG87	Ոսկեվազ

AG88	Չքնաղ
AG89	Պարտիզակ
AG90	Զամշլու
AG91	Զրամբար
AG92	Ոյա թազա
AG93	Սաղմոսավան
AG94	Կանիաշիր
AG95	Սասունիկ
AG96	Սարալանջ
AG97	Սիփան
AG98	Սորիկ
AG99	Սուսեր
AG100	Վարդաբյուր
AG101	Վարդենիս
AG102	Վարդենուտ
AG103	Վերին Բազմաբերդ
AG104	Վերին Սասնաշեն
AG105	Վերին Սասունիկ
AG106	Տեղեր
AG107	Ցամաքասար
AG108	Ուշի
AG109	Ուջան

AG110	Փարպի
AG111	Քուչակ
AG112	Օհանավան
AG113	Օշական
AG114	Օրգով
AG115	Այլ

ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	**Բնակավայրի անվանումը**
AR01	Արտաշատ
AR02	Արարատ
AR03	Մասիս
AR04	Վեդի
AR05	Աբովյան
AR06	Ազատաշեն
AR07	Ազատավան
AR08	Այգավան
AR09	Այգեզարդ
AR10	Այգեպատ
AR11	Այգեստան
AR12	Այնթապ

AR13	Ավշար
AR14	Արալեզ
AR15	Արարատ
AR16	Արաքսավան
AR17	Արբաթ
AR18	Արզավանդ
AR19	Արմաշ
AR20	Արևաբույր
AR21	Արևշատ
AR22	Բաղրամյան
AR23	Բարձրաշեն
AR24	Բերդիկ
AR25	Բերքանուշ
AR26	Բյուրավան
AR27	Բուրաստան
AR28	Գեղանիստ
AR29	Գետազատ
AR30	Գետափնյա
AR31	Գոռավան
AR32	Դալար
AR33	Դաշտավան

AR34	Դաշտաքար
AR35	Դարակերտ
AR36	Դարբնիկ
AR37	Դեղձուտ
AR38	Դիմիտրով
AR39	Դիտակ
AR40	Դվին
AR41	Եղեգնավան
AR42	Երասխ
AR43	Զանգակատուն
AR44	Զորակ
AR45	Լանջազատ
AR46	Լանջանիստ
AR47	Լանջառ
AR48	Լուսաշող
AR49	Լուսառատ
AR50	Խաչփառ
AR51	Կանաչուտ
AR52	Հայանիստ
AR53	Հնաբերդ
AR54	Հովտաշատ

AR55	Հովտաշեն
AR56	Ղուկասավան
AR57	Մասիս
AR58	Մարմարաշեն
AR59	Մխչյան
AR60	Մրգանուշ
AR61	Մրգավան
AR62	Մրգավետ
AR63	Նարեկ
AR64	Նիզամի
AR65	Նշավան
AR66	Նոյակերտ
AR67	Նորաբաց
AR68	Նորամարգ
AR69	Նորաշեն
AR70	Նոր Խարբերդ
AR71	Նոր կյանք
AR72	Նոր Կյուրին
AR73	Նոր ուղի
AR74	Շահումյան
AR75	Շաղափ

AR76	Ոսկետափ
AR77	Ոստան
AR78	Պարույր Սևակ
AR79	Ջրահովիտ
AR80	Ջրաշեն
AR81	Ռանչպար
AR82	Սայաթ-Նովա
AR83	Սիս
AR84	Սիսավան
AR85	Սիփանիկ
AR86	Սուրենավան
AR87	Վանաշեն
AR88	Վարդաշատ
AR89	Վարդաշեն
AR90	Գինեվետ
AR91	Վերին Արտաշատ
AR92	Վերին Դվին
AR93	Տափերական
AR94	Ուրցալանջ
AR95	Ուրցաձոր
AR96	Փոքր Վեդի

AR97	Քաղցրաշեն
AR98	Այլ

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	**Բնակավայրի անվանումը**
AM01	Արմավիր (Հոկտեմբերյան)
AM02	Վաղարշապատ (Էջմիածին)
AM03	Մեծամոր
AM04	Ակնալիճ
AM05	Ակնաշեն
AM06	Աղավնատուն
AM07	Ամասիա
AM08	Ամբերդ
AM09	Այգեկ
AM10	Այգեշատ (Արմավիրի շրջ.)
AM11	Այգեշատ (Էջմիածնի շրջ.)
AM12	Ապագա
AM13	Առատաշեն
AM14	Արագած
AM15	Արազափ
AM16	Արաքս (Արմավիրի շրջ.)
AM17	Արաքս (Էջմիածնի շրջ.)

AM18	Արգավանդ
AM19	Արգինա
AM20	Արմավիր
AM21	Արշալույս
AM22	Արտամետ
AM23	Արտիմետ
AM24	Արտաշար
AM25	Արևադաշտ
AM26	Արևաշատ
AM27	Արևիկ
AM28	Բագարան
AM29	Բաղրամյան (Բաղրամյանի շրջ.)
AM30	Բաղրամյան (Էջմիածնի շրջ.)
AM31	Բամբակաշատ
AM32	Բերքաշատ
AM33	Գայ
AM34	Գետաշեն
AM35	Գրիբոյեդով
AM36	Դալարիկ
AM37	Դաշտ
AM38	Դողս

AM39	Եղեգնուտ
AM40	Երասխահուն
AM41	Երվանդաշատ
AM42	Զարթոնք
AM43	Մայիսյան
AM44	Լենուղի
AM45	Լեռնագոգ
AM46	Լեռնամերձ
AM47	Լուկաշին
AM48	Լուսագյուղ
AM49	Խանջյան
AM50	Խորոնք
AM51	Ծաղկալանջ
AM52	Ծաղկունք
AM53	Ծիածան
AM54	Կողթավան
AM55	Հայթաղ
AM56	Հայկաշեն
AM57	Հայկավան
AM58	Հացիկ
AM59	Սարդարապատ

AM60	Հովտամեջ
AM61	Հուշակերտ
AM62	Այգեվան
AM63	Մարգարա
AM64	Մեծամոր
AM65	Մերձավան
AM66	Մյասնիկյան
AM67	Մրգաշատ
AM68	Մրգաստան
AM69	Մուսալեռ
AM70	Նալբանդյան
AM71	Նոր Արմավիր
AM72	Նոր Արտագերս
AM73	Նոր Կեսարիա
AM74	Նորակերտ
AM75	Նորապատ
AM76	Նորավան
AM77	Շահումյան
AM78	Շահումյանի թռչնաֆաբրիկա
AM79	Շենավան
AM80	Շենիկ

AM81	Ոսկեհատ
AM82	Պտղունք
AM83	Ջանֆիդա
AM84	Ջրաշեն
AM85	Ջրառատ
AM86	Ջրարբի
AM87	Գեղակերտ
AM88	Ալաշկերտ
AM89	Վանանդ
AM90	Վարդանաշեն
AM91	Տալվորիկ
AM92	Տանձուտ
AM93	Տարոնիկ
AM94	Փարաքար
AM95	Փշատավան
AM96	Քարակերտ
AM97	Ֆերիկ
AM98	Այլ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	**Բնակավայրի անվանումը**
GE01	Գավառ (Կամո)

GE02	Ճամբարակ
GE03	Մարտունի
GE04	Սևան
GE05	Վարդենիս
GE06	Ազատ
GE07	Ախպրաձոր
GE08	Ակունք
GE09	Աղբերք
GE10	Այգուտ
GE11	Այրք
GE12	Անտառամեջ
GE13	Աստղաձոր
GE14	Ավազան
GE15	Արեգունի
GE16	Արծվանիստ
GE17	Արծվաշեն
GE18	Արտանիշ
GE19	Արփունք
GE20	Բերդկունք
GE21	Գանձակ
GE22	Գեղամաբակ

GE23	Գեղամասար
GE24	Գեղամավան
GE25	Գեղարքունիք
GE26	Գեղաքար
GE27	Գեղահովիտ
GE28	Գետիկ
GE29	Դարանակ
GE30	Դդմաշեն
GE31	Դպրաբակ
GE32	Դրախտիկ
GE33	Երանոս
GE34	Զոլաքար
GE35	Զովաբեր
GE36	Ծովասար
GE37	Թթուջուր
GE38	Լանջաղբյուր
GE39	Լիճք
GE40	Լճաշեն
GE41	Լճավան
GE42	Լճափ
GE43	Լուսակունք

GE44	Խաչաղբյուր
GE45	Ծակքար
GE46	Ծաղկաշեն
GE47	Ծաղկունք
GE48	Ծափաթաղ
GE49	Ծովագյուղ
GE50	Ծովազարդ
GE51	Ծովակ
GE52	Ծովինար
GE53	Կալավան
GE54	Կախակն
GE55	Կարճաղբյուր
GE56	Կարմիրգյուղ
GE57	Կութ
GE58	Կուտական
GE59	Հայրավանք
GE60	Զորագյուղ
GE61	Զորավանք
GE62	Մադինա
GE63	Մարտունի
GE64	Մաքենիս

GE65	Մեծ Մասրիկ
GE66	Ներքին Գետաշեն
GE67	Ներքին Շորժա
GE68	Նորաբակ
GE69	Նորակերտ
GE70	Նորաշեն
GE71	Նորատուս
GE72	Շատջրեք
GE73	Շատվան
GE74	Շորժա
GE75	Չկալովկա
GE76	Զաղացաձոր
GE77	Ջիլ
GE78	Սարուխան
GE79	Սեմյոնովկա
GE80	Սոթք
GE81	Վահան
GE82	Վաղաշեն
GE83	Վաննան
GE84	Վարդաձոր
GE85	Վարդենիկ

GE86	Վարսեր
GE87	Վերին Գետաշեն
GE88	Վերին Շորժա
GE89	Տորֆավան
GE90	Տրեստուք
GE91	Փամբակ
GE92	Փոքր Մասրիկ
GE93	Այլ

ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	**Բնակավայրի անվանումը**
LR01	Վանաձոր
LR02	Ալավերդի
LR03	Ախթալա
LR04	Թումանյան
LR05	Շամլուղ
LR06	Սպիտակ
LR07	Ստեփանավան
LR08	Տաշիր
LR09	Ագարակ
LR10	Ազնվաձոր
LR11	Աթան

LR12	Ահնիձոր
LR13	Ամրակից
LR14	Այգեհատ
LR15	Անտառամուտ
LR16	Ապավեն
LR17	Արդվի
LR18	Արծնի
LR19	Արջուտ
LR20	Արևաձագ
LR21	Արևաշող
LR22	Աքորի
LR23	Բազում
LR24	Բլագոդարնոյե
LR25	Բովաձոր
LR26	Անտառաշեն
LR27	Գարգառ
LR28	Գեղասար
LR29	Գյուլագարակ
LR30	Գոգարան
LR31	Գուգարք
LR32	Դաշտադեմ

LR33	Դարպաս
LR34	Դեբետ
LR35	Դսեղ
LR36	Եղեգնուտ
LR37	Թեղուտ
LR38	Լեջան
LR39	Լեռնահովիտ
LR40	Լեռնանցք
LR41	Լեռնապատ
LR42	Լեռնավան
LR43	Լերմոնտով
LR44	Լոռի Բերդ
LR45	Լորուտ
LR46	Լուսաղբյուր
LR47	Խնկոյան
LR48	Ծաթեր
LR49	Ծաղկաբեր
LR50	Ծաղկաշատ
LR51	Կաթնաղբյուր
LR52	Կաթնաջուր
LR53	Կաթնառատ

LR54	Կաճաճկուտ
LR55	Կարմիր Աղեկ
LR56	Կողես
LR57	Կուրթան
LR58	Հագվի
LR59	Հալավար
LR60	Հաղպատ
LR61	Հարթագյուղ
LR62	Հոբարձի
LR63	Հովնանաձոր
LR64	Զյունաշող
LR65	Զորագետ
LR66	Զորագյուղ
LR67	Զորամուտ
LR68	Ղուրսալ
LR69	Ճոճկան
LR70	Մարգահովիտ
LR71	Մարց
LR72	Մեղովկա
LR73	Մեծ Այրում
LR74	Մեծավան

LR75	Մեծ Պառնի
LR76	Մեղվահովիտ
LR77	Միխայլովկա
LR78	Մղարթ
LR79	Յաղդան
LR80	Նեղոց
LR81	Նովոսելցովո
LR82	Նորաշեն
LR83	Նոր Խաչակապ
LR84	Շահումյան
LR85	Շամուտ
LR86	Շենավան
LR87	Շիրակամուտ
LR88	Շնող
LR89	Չկալով
LR90	Պաղաղբյուր
LR91	Պետրովկա
LR92	Պրիվոլնոյե
LR93	Պուշկինո
LR94	Ջիլիզա
LR95	Ջրաշեն

LR96	Սարալանջ
LR97	Սարահարթ
LR98	Սարամեջ
LR99	Սարատովկա
LR100	Սարչապետ
LR101	Սվերդլով
LR102	Վահագնաձոր
LR103	Վահագնի
LR104	Վարդաբլուր
LR105	Ուռուտ
LR106	Ուրասար
LR107	Փամբակ
LR108	Քարաբերդ
LR109	Քարաձոր
LR110	Քարինջ
LR111	Քարկոփ
LR112	Օձուն
LR113	Ֆիոլետովո
LR114	Այլ

ԿՈՏԱՅՔ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	**Բնակավայրի անվանումը**

KT01	Հրազդան
KT02	Աբովյան
KT03	Բյուրեղավան
KT04	Եղվարդ
KT05	Ծաղկաձոր
KT06	Նոր Հաճն
KT07	Չարենցավան
KT08	Ալափարս
KT09	Ակունք
KT10	Աղավնաձոր
KT11	Առինջ
KT12	Արագյուղ
KT13	Արամուս
KT14	Արգել
KT15	Արզական
KT16	Արզնի
KT17	Արտավազ
KT18	Բալահովիտ
KT19	Բջնի
KT20	Բուժական
KT21	Գառնի

KT22	Գեղադիր
KT23	Գեղաշեն
KT24	Գեղարդ
KT25	Գետամեջ
KT26	Գողթ
KT27	Զառ
KT28	Զովաշեն
KT29	Զովունի
KT30	Զովք
KT31	Զորավան
KT32	Թեղենիք
KT33	Լեռնանիստ
KT34	Կաթնաղբյուր
KT35	Կամարիս
KT36	Կապուտան
KT37	Կարենիս
KT38	Կոտայք
KT39	Հանքավան
KT40	Հատիս
KT41	Հացավան
KT42	Զորաղբյուր

KT43	Մայակովսկի
KT44	Մարմարիկ
KT45	Մեղրաձոր
KT46	Մրգաշեն
KT47	Նոր Արտամետ
KT48	Նոր Գեղի
KT49	Նոր գյուղ
KT50	Նոր Երզնկա
KT51	Նուռնուս
KT52	Ողջաբերդ
KT53	Պռոշյան
KT54	Պտղնի
KT55	Ջրաբեր
KT56	Ջրառատ
KT57	Ջրվեժ
KT58	Գետարգել
KT59	Սարալանջ
KT60	Սոլակ
KT61	Մաբերդ
KT62	Վերին Պտղնի
KT63	Քաղսի

KT64	Քանաքեռավան
KT65	Քասախ
KT66	Քարաշամբ
KT67	Ֆանտան
KT68	Այլ

ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	**Բնակավայրի անվանումը**
SH01	Գյումրի
SH02	Արթիկ
SH03	Մարալիկ
SH04	Ազատան
SH05	Ալվար
SH06	Ախուրիկ
SH07	Ախուրյան
SH08	Աղին
SH09	Աղվորիկ
SH10	Ամասիա
SH11	Այգեբաց
SH12	Անիավան
SH13	Անիպեմզա
SH14	Անուշավան

SH15	Աշոցք
SH16	Առափի
SH17	Արդենիս
SH18	Արեգնադեմ
SH19	Արփենի
SH20	Արևիկ
SH21	Արևշատ
SH22	Նորշեն
SH23	Բայանդուր
SH24	Բանդիվան
SH25	Բաշգյուղ
SH26	Բավրա
SH27	Բենիամին
SH28	Բերդաշեն
SH29	Գառնառիճ
SH30	Գեղանիստ
SH31	Գետափ
SH32	Գետք
SH33	Բյուրակն
SH34	Գոգհովիտ
SH35	Գտաշեն

SH36	Գուսանագյուղ
SH37	Երազգավորս
SH38	Զարիշատ
SH39	Զորակերտ
SH40	Զույգաղբյուր
SH41	Թավշուտ
SH42	Թորոսգյուղ
SH43	Իսահակյան
SH44	Լանջիկ
SH45	Լեռնագյուղ
SH46	Լեռնակերտ
SH47	Լեռնուտ
SH48	Լուսակերտ
SH49	Լուսաղբյուր
SH50	Ծաղկուտ
SH51	Կամո
SH52	Կապս
SH53	Կառնուտ
SH54	Կարմրավան
SH55	Կարմրաքար
SH56	Կաքավասար

SH57	Կրաշեն
SH58	Կրասար
SH59	Հայկաձոր
SH60	Հայկասար
SH61	Հայկավան
SH62	Հայրենյաց
SH63	Հառիճ
SH64	Հարթաշեն
SH65	Հացիկ
SH66	Հողմիկ
SH67	Հոռոմ
SH68	Հովիտ
SH69	Հովտաշեն
SH70	Հովտուն
SH71	Հովունի
SH72	Զիթհանքով
SH73	Զորակապ
SH74	Զորաշեն
SH75	Ղազանչի
SH76	Ղարիբջանյան
SH77	Մայիսյան

SH78	Մարմաշեն
SH79	Մեծ Մանթաշ
SH80	Մեծ Սարիար
SH81	Մեծ Սեպասար
SH82	Մեղրաշատ
SH83	Մեղրաշեն
SH84	Բասեն
SH85	Մուսայելյան (Աշոցքի շրջ.)
SH86	Նահապետավան
SH87	Նոր Կյանք
SH88	Շաղիկ
SH89	Շիրակ
SH90	Շիրակավան
SH91	Ողջի
SH92	Ոսկեհասկ
SH93	Պեմզաշեն
SH94	Զաջուռ
SH95	Զաջուռավան
SH96	Զրաձոր
SH97	Զրառատ
SH98	Զրափի
SH99	Սալուտ

SH100	Սառնաղբյուր
SH101	Սարագյուղ
SH102	Սարալանջ
SH103	Սարակապ
SH104	Սարապատ
SH105	Սարատակ
SH106	Սիզավետ
SH107	Սպանդարյան
SH108	Վահրամաբերդ
SH109	Վարդաղբյուր
SH110	Վարդաքար
SH111	Տուֆաշեն
SH112	Ցողամարգ
SH113	Փանիկ
SH114	Փոքրաշեն
SH115	Փոքր Մանթաշ
SH116	Փոքր Սարիար
SH117	Փոքր Սեպասար
SH118	Քարաբերդ
SH119	Քեթի
SH120	Այլ

ՍՅՈՒՆԻՔ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	Բնակավայրի անվանումը
SY01	Կապան
SY02	Ագարակ
SY03	Գորիս
SY04	Դաստակերտ
SY05	Մեղրի
SY06	Սիսիան
SY07	Քաջարան
SY08	Ագարակ
SY09	Ալվանք
SY10	Ախլաթյան
SY11	Աղիտու
SY12	Աղվանի
SY13	Անգեղակոթ
SY14	Անտառաշատ
SY15	Աշոտավան
SY16	Առաջաձոր
SY17	Արավուս
SY18	Արծվանիկ
SY19	Արևիս
SY20	Բալաք

SY21	Բարձրավան
SY22	Բնունիս
SY23	Բռնակոթ
SY24	Ակներ
SY25	Գեղանուշ
SY26	Գեղի
SY27	Գետաթաղ
SY28	Գորայք
SY29	Գուդեմնիս
SY30	Դավիթ Բեկ
SY31	Դարբաս
SY32	Տավրուս
SY33	Եղեգ
SY34	Եղվարդ
SY35	Թանահատ
SY36	Թասիկ
SY37	Լեհվազ
SY38	Լեռնաձոր
SY39	Լիճք
SY40	Լծեն
SY41	Լոր

SY42	Աճանան
SY43	Խդրանց
SY44	Խնաձախ
SY45	Խնձորեսկ
SY46	Խոզնավար
SY47	Խոտ
SY48	Ծավ
SY49	Ծղուկ
SY50	Կաղնուտ
SY51	Կարճևան
SY52	Կոռնիձոր
SY53	Կուրիս
SY54	Հալիձոր
SY55	Հարթաշեն
SY56	Հարժիս
SY57	Հացավան
SY58	Զորաստան
SY59	Իշխանասար
SY60	Ճակատեն
SY61	Մուցք
SY62	Ներքին Խնձորեսկ

SY63	Ներքին Խոտանան
SY64	Ներքին Հանդ
SY65	Նռնաձոր
SY66	Նորաշենիկ
SY67	Նորավան
SY68	Շաղատ
SY69	Շաքի
SY70	Շենաթաղ
SY71	Շիկահող
SY72	Շինուհայր
SY73	Շվանիձոր
SY74	Շրվենանց
SY75	Շուռնուխ
SY76	Որոտան (Գորիսի շրջ.)
SY77	Որոտան (Սիսիանի շրջ.)
SY78	Չափնի
SY79	Սալվարդ
SY80	Սառնակունք
SY81	Սյունիք
SY82	Նժդեհ
SY83	Սպանդարյան

SY84	Սվարանց
SY85	Սրաշեն
SY86	Սևաքար
SY87	Վահրավար
SY88	Վաղատին
SY89	Վաղատուր
SY90	Վանեք
SY91	Վարդանիձոր
SY92	Վարդավանք
SY93	Վերին Խոտանան
SY94	Վերիշեն
SY95	Տաթև
SY96	Տանձավեր
SY97	Տանձատափ
SY98	Տաշտուն
SY99	Տեղ
SY100	Տոլորս
SY101	Տորունիք
SY102	Ուժանիս
SY103	Ույծ
SY104	Նոր Աստղաբերդ
SY105	Քաշունի

SY106	Քաջարան
SY107	Քարահունջ
SY108	Քարաշեն
SY109	Օխտար
SY110	Այլ

ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	**Բնակավայրի անվանումը**
VD01	Եղեգնաձոր
VD02	Ջերմուկ
VD03	Վայք
VD04	Ագարակաձոր
VD05	Ազատեկ
VD06	Աղավնաձոր
VD07	Աղնջաձոր
VD08	Արենի
VD09	Արին
VD10	Արտաբույնք
VD11	Արտավան
VD12	Արփի
VD13	Բարձրունի
VD14	Գետափ

VD15	Գլաձոր
VD16	Գնդեվազ
VD17	Գնիշիկ
VD18	Գողթանիկ
VD19	Գոմք
VD20	Ելփին
VD21	Եղեգիս
VD22	Զառիթափ
VD23	Զեղեա
VD24	Թառաթումբ
VD25	Խաչիկ
VD26	Խնձորուտ
VD27	Կարմրաշեն
VD28	Հերհեր
VD29	Հերմոն
VD30	Հորբատեղ
VD31	Հորս
VD32	Մալիշկա
VD33	Մարտիրոս
VD34	Նոր Ազնաբերդ
VD35	Շատին

VD36	Չիվա
VD37	Ռինդ
VD38	Սալլի
VD39	Սարավան
VD40	Սերս
VD41	Վարդահովիտ
VD42	Վերնաշեն
VD43	Փոռ
VD44	Քարագլուխ
VD45	Այլ

ՏԱՎՈՒՇ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	**Բնակավայրի անվանումը**
TV01	Իջևան
TV02	Այրում
TV03	Բերդ
TV04	Դիլիջան
TV05	Նոյեմբերյան
TV06	Ազատամուտ
TV07	Ակնաղբյուր
TV08	Աղավնավանք
TV09	Աճարկուտ

TV10	Այգեհովիտ
TV11	Այգեձոր
TV12	Այգեպար
TV13	Աչաջուր
TV14	Արծվաբերդ
TV15	Արճիս
TV16	Բագրատաշեն
TV17	Բաղանիս
TV18	Բարեկամավան
TV19	Բերդավան
TV20	Բերքաբեր
TV21	Գանձաքար
TV22	Գետահովիտ
TV23	Գոշ
TV24	Դեբեդավան
TV25	Դեղձավան
TV26	Դիտավան
TV27	Դովեղ
TV28	Ենոքավան
TV29	Թեղուտ
TV30	Տավուշ
TV31	Իծաքար

TV32	Լճկաձոր
TV33	Լուսահովիտ
TV34	Լուսաձոր
TV35	Խաշթառակ
TV36	Խաչարձան
TV37	Ծաղկավան (Իջևանի շրջ.)
TV38	Ծաղկավան (Տավուշի շրջ.)
TV39	Կիրանց
TV40	Կոթի
TV41	Կողբ
TV42	Հաղարծին
TV43	Հաղթանակ
TV44	Հովք
TV45	Մոսեսգեղ
TV46	Նավուր
TV47	Ներքին Կարմիր աղբյուր
TV48	Նորաշեն
TV49	Ոսկեպար
TV50	Ոսկեվան
TV51	Չինարի
TV52	Չինչին
TV53	Չորթան

TV54	Պառավաքար
TV55	Պտղավան
TV56	Ջուջևան
TV57	Սարիգյուղ
TV58	Սևքար
TV59	Վազաշեն
TV60	Վարագավան
TV61	Վերին Կարմիր աղբյուր
TV62	Զորական
TV63	Այլ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ

Բնակավայրի կոդը	**Բնակավայրի անվանումը**
YR01	Աջափնյակ
YR02	Ավան
YR03	Արաբկիր
YR04	Դավթաշեն
YR05	Էրեբունի
YR06	Կենտրոն
YR07	Մալաթիա - Սեբաստիա
YR08	Նոր Նորք
YR09	Նորք - Մարաշ

YR10	Նուբարաշեն
YR11	Շենգավիթ
YR12	Քանաքեռ - Զեյթուն

(հավելվածը փոփ. 07.04.09 թիվ 80-Ն, 04.03.16 թիվ 35-Ն)

ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳԻ

Հավելված 2

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

1. Արտարժութային պահանջները և խնդրահարույց պարտավորությունները փոխարկվում են դրամային արտահայտությամբ՝ հիմք ընդունելով հաշվետու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը:

2. Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները: Ընդ որում.

1) Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային ավանդ, ապա երաշխավորված ավանդը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված ավանդների գումարը: Եթե ստացված գումարը փոքր է տասը միլիոն դրամից, ապա երաշխավորված ավանդի հաշվարկի մեջ ընդգրկվում են նաև Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետով նախատեսված դրամական միջոցները՝ տասը միլիոն դրամի և առաջին հերթին հաշվարկված գումարի տարբերությունը չգերազանցող չափով:

2) Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային ավանդ, ապա երաշխավորված ավանդը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված ավանդների գումարը: Եթե ստացված գումարը փոքր է հինգ միլիոն դրամից, ապա երաշխավորված ավանդի հաշվարկի մեջ ընդգրկվում են նաև Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետով նախատեսված դրամական միջոցները՝ հինգ միլիոն դրամի և առաջին հերթին հաշվարկված գումարի տարբերությունը չգերազանցող չափով:

3) Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային ավանդներ, ապա երաշխավորված ավանդը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում է երաշխավորված ավանդի դրամային մասը, սույն կետի 1) ենթակետի համաձայն: Եթե ստացված գումարը մեծ կամ հավասար է հինգ միլիոն դրամին, ապա արտարժութային ավանդը չի մասնակցում երաշխավորված ավանդի հաշվարկմանը: Եթե ստացված գումարը փոքր է հինգ միլիոն դրամից, ապա հաշվարկվում է նաև երաշխավորված ավանդի արտարժութային մասը, ընդ որում, առաջին հերթին հաշվարկվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված ավանդների գումարը: Եթե ստացված գումարը փոքր է հինգ միլիոնից, ապա հաշվարկվում են նաև Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետով նախատեսված դրամական միջոցները՝ հինգ միլիոնի և հաշվարկված երաշխավորված ավանդի տարբերությունը չգերազանցող չափով:

3. Եթե ավանդատուն անվճարունակ բանկի նկատմամբ ունի խնդրահարույց պարտավորություն, ապա երաշխավորված ավանդը հաշվարկվում է ավանդատուի ավանդի և բանկի նկատմամբ ունեցած խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա:

4. Եթե ավանդատուն բանկում ունի և դրամային և արտարժութային ավանդ և միևնույն ժամանակ բանկի նկատմամբ ունի դրամային և արտարժութային խնդրահարույց պարտավորություն, ապա դրանց տարբերությունները հաշվարկվում են հետևյալ կերպ.

1) հաշվարկվում է դրամային ավանդի և դրամային խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

2) հաշվարկվում է արտարժութային ավանդի և արտարժութային խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

3) սույն կետի 1) և 2) ենթակետերի հաշվարկների դրական արդյունքների դեպքում, երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 3) ենթակետի համաձայն,

4) սույն կետի 1) և 2) ենթակետերի հաշվարկներից մեկի բացասական արդյունքի դեպքում հաշվարկվում է վերը նշված երկու տարբերությունների հանրագումարը,

5) ստացված արդյունքի դրական լինելու դեպքում հաշվարկվում է երաշխավորված ավանդը: Ընդ որում, եթե ստացված դրական տարբերությունը դրամային է, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է համաձայն սույն հավելվածի 2-րդ կետի 1) ենթակետի համաձայն, հակառակ դեպքում՝ համաձայն սույն հավելվածի 2-րդ կետի 2) ենթակետի:

5. Եթե բանկում ավանդատուի ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միանալու դեպքում, ապա բանկը տվյալ ավանդատուի երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարի հաշվարկը կատարելիս յուրաքանչյուր միացող բանկում տվյալ ավանդատուին պատկանող բոլոր ավանդները դիտում է որպես առանձին բանկային ավանդ: Ընդ որում՝ միացման արդյունքում ձևավորված ժամկետային ավանդների գծով բանկը երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկում է առանձին՝ մինչև ավանդի պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը, իսկ ցպահանջ կամ ժամկետային ավանդից բացի ավանդի ժամկետի վերաբերյալ այլ պայմանով ավանդների գծով՝ միացման պայմանագիրը օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու և գրանցվելու պահից մեկ տարվա ընթացքում: Սահմանված մեկ տարին կամ ավանդի պայմանագրով սահմանված ժամկետը լրանալու պահից այդ ավանդները դիտվում են որպես մեկ ավանդ, և բանկում միևնույն ավանդատուին պատկանող բոլոր ավանդների գծով հաշվարկվող երաշխավորված ավանդի հատուցման գումարը հաշվարկվում է սույն կարգի հավելված 2-ի 2-րդ կետի համաձայն:

(5-րդ կետը լրաց. 04.03.16 թիվ 35-Ն)

(հավելվածը փոփ. 03.08.10 թիվ 198-Ն, 15.12.15 թիվ 265-Ն, փոփ., լրաց. 04.03.16 թիվ 35-Ն)

(հավելվածը խմբ., փոփ., լրաց. 07.04.09 թիվ 80-Ն, փոփ. 03.08.10 թիվ 198-Ն, խմբ., փոփ. 15.12.15 թիվ 265-Ն, լրաց., փոփ. 04.03.16 թիվ 35-Ն)